



*ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՄՍՅԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՏՆԱԿՆԵՐԸ ՄԱՍՍԱԲ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ
ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ*



ՏԵՂԵԿԱՏՈՒ

Գյումրի
2012

Աղետի գոտում 2011-2012 թթ. բնակարաններ ստացած ընտանիքների կողմից տնակները մասամբ պահպանելու իրավունքից օգտվելու կարգը: Տեղեկատու, 2012թ., Գյումրի

Տեղեկատուն պատրաստել են

*Ծրագրի ղեկավար՝ Վահան Թումասյան
Ծրագրի համադասող՝ Աիդա Խաչատրյան
Խմբագիր՝ Գեղամ Մկրտչյան
Աշխատանքային խումբ՝
Նարեկ Թումասյան, Լիլիթ Գրիգորյան*

Սույն տեղեկատուն պատրաստվել և տպագրվել է «Քաունթերփարթ ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության No ALD-111-LA-10-00001 համագործակցության DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում, «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի միջոցով՝ «Տնակից տուն» ծրագրով:

Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ-ին, և հնարավոր է, որ չհամընկնեն «Քաունթերփարթ ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերին:

Ծրագրի անվանումը

«Տնակից տուն»

Հիմնախնդիրը

2009-2010 թթ. աղետի գոտում բնակարանաշինության և բնակարանների բաշխման գործընթացի դիտարկումը ցույց տվեց, որ առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումները անհնար են առանց ՀՀ կառավարության՝ Երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքներին բնակարանների հատկացման կարգը սահմանող N 432, N 1337 և N 1402 որոշումներում ու դրանցով սահմանված կանոնակարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու:

Նպատակը և խնդիրները

Երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանների բաշխման կարգը սահմանող ՀՀ կառավարության N 432, N 1337 և N 1402 որոշումներում լրացումների և փոփոխությունների կատարում:

Աջակցություն նոր բնակարաններ ստացած բազմանդամ ընտանիքներին բնակարանների սեփականաշնորհման, ինչպես նաև տնակները մասամբ պահպանելու իրավունքից օգտվելու գործում:

Ծրագրի իրականացման վայրը և ժամանակահատվածը

Շիրակի մարզ, Գյումրի, 2011 թ. դեկտեմբեր – 2012 թ. հուլիս:

Նոր բնակարաններ ստացած և մեկից ավելի ոչ հիմնական շինություն զբաղեցնող բազմանդամ ընտանիքների տնակներից մեկը բնակությունից չազատելու և չքանդելու ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգը

ՀՀ կառավարությունը 2011 թ. ապրիլի 14-ին ադետի գոտու բնակարանների բաշխման կարգում կատարած փոփոխություններով բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն տվեց մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում դրանցից մեկը բնակությունից չազատել և չքանդել, ինչը դրական ազդեցություն ունեցավ ինչպես բազմաթիվ բազմանդամ ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու, այնպես էլ Մուշ-2 թաղամասի բնակեցումն արագացնելու հարցում: Սակայն այդ փոփոխություններում անտեսվեցին այն բազմանդամ ընտանիքների շահերն ու իրավունքները, որոնք տնօրինում են ընդամենը մեկ տնակ: Նրանց ոչ հիմնական շինությունները ենթակա են ամբողջովին քանդման: Այդ իսկ պատճառով անլուծելի խնդրի առաջ են կանգնել բազմանդամ, սակայն մեկ տնակ տնօրինող տասնյակ ընտանիքներ, որոնք մեծ ցանկության դեպքում անգամ չեն կարող բնակվել մեկ բնակարանում, իսկ նոր բնակարանները սեփականաշնորհել չի թույլատրվում, քանի որ չեն քանդել իրենց տնակները:

Բնակարան ստացած՝ մեկից ավելի տնակներ տնօրինող բազմանդամ ընտանիքներին արտոնության տրամադրումը, իսկ մեկ տնակ տնօրինողներին՝ դրա չտրամադրումը անհավասար պայմանների մեջ է դնում նույն կարգավիճակում գտնվող բազմանդամ ընտանիքներին:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն տրվեց մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում բնակությունից չազատել և չքանդել դրանցից միայն մեկը, եթե բնակարան ստացած ընտանիքի անդամների թիվը կազմում է՝

ա. 1-սենյականոց բնակարան ստանալու դեպքում 5 և ավելի անձ.

բ. 2-սենյականոց բնակարան ստանալու դեպքում՝ 7 և ավելի անձ.

գ. 3-սենյականոց բնակարան ստանալու դեպքում՝ 8 և ավելի անձ:

Ոչ հիմնական շինությունների չքանդելու ընտրությունը կատարվում է տվյալ ընտանիքի չափահաս անդամների կողմից մարզպետին ներկայացված համապատասխան դիմումի համաձայն, հաշվի առնելով զբաղեցրած ոչ հիմնական շինությունների տեխնիկական վիճակը և քաղաքաշինական նպատակահարմարությունը:

ՀՀ կառավարության այդ որոշմամբ սահմանված է, որ բնակարան ստացած ընտանիքների զբաղեցրած ոչ հիմնական շինություններից բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար ստեղծված է աշխատանքային խումբ՝ մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ներգրավմամբ:

Աղետի գոտում բնակարան ստացած բազմանդամ ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինությունները բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով ուսումնասիրություններ կատարող աշխատանքային խումբ ստեղծելու մասին ՀՀ Շիրակի մարզի մարզպետ Ա.Գիզիրյանի կարգադրությունը (2011 մայիսի 02, N 41)

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1402-Ն որոշման 4.1-րդ կետի դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան ստացած ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինություններից՝ բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավար Տիգրան Հարությունյանին՝ բնակարան ստացած ընտանիքների դիմումները ստանալուց հետո աշխատանքային խմբի կողմից 5-օրյա ժամկետում կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմել ոչ հիմնական շինությունը բնակությունից ազատելու կամ չազատելու վերաբերյալ հիմնավորված եզրակացություն:
3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել ինձ»:

Աշխատանքային խմբի կազմը

Տիգրան Հարությունյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ, խմբի ղեկավար,
Անդամներ՝

Անուշավան Պապիկյան – Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի պետ /համաձայնությամբ/,

Մկրտիչ Ասատրյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի աշխատակից,

Սուրեն Ավագյան – ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի բաժնի գլխավոր տեսուչ,

Լեռնիկ Հովհաննիսյան – Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի գործակալ /համաձայնությամբ/:

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Խ.Պողոսյան

«_____» _____ 2012թ.

Դ Ի Մ Ո Ի Մ

Ես՝ _____
2012թ. իմ _____ անձից բաղկացած ընտանիքով ստացել եմ
ք.Գյումրիի «Մուշ-2» (Անի) թաղամասի N_____ շենքի _____-րդ
_____ սենյականոց բնակարանը:

Մինչև բնակարան ստանալը փաստացի բնակվել եմք N
_____ ժամանակավոր
կացարան(ներ)-ում:

Քանի որ _____ անձով հնարավոր չէ բնակվել հատկացված
վերոհիշյալ բնակարանում, ուստի խնդրում եմք Ձեր
թույլտվությունը մեր կողմից զբաղեցրած ժամանակավոր
կացարան(ներ)-ից մեկը _____ չքանդելու համար՝
(ընտանիքի մի մասի բնակվելու նպատակով), որի համար
տալիս եմք մեր ընտանիքի բոլոր չափահաս անդամների
համաձայնությունը:

Դիմողներ՝

N	Անուն, ազգանուն, հայրանունը	Ծննդ.թիվը	Ազգակցական կապը	Անձնագրի տվյալներ	Ստորագրություն

« _____ » _____ 2012թ.

«Շիրակ կենտրոն» ՀԿ

*Շիրակի մարզ, 3104, Գյումրի,
Վարպետաց 176, 301, 303,
հեռ. +(374 312) 6-69-92,
+(374 55) 06-69-92
+(374 91) 45-13-37*

Էլ. փոստ՝ info@shirakcentre.org
Վեբ կայք՝ www.shirakcentre.org